ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N2043-Ա/8

ք. Երևան «23» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ե. Աբրահամյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043 -Ն որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ լաբորատոր գործիքակազմի ձեռքբերման համար «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **69 100 000** (վաթսունինը միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող լաբորատոր գործիքակազմի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ

փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043 -Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 7-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011041127 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ Գ. Սաֆարյան (ստորագրություն) Կ.Տ	«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ ք. Երևան, Բագրատունի 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018001694 ՀՎՀՀ 00091789 Տնօրեն Ե. Աբրահամյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված
2022 թ. դեկտեմբերի 23-ին
կնքված N 2043-Ն/8 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Պատմամշակութային ժառանգության ոլորտի կազմակերպությունների գույքային ապահովվածության բարելավում	«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ լաբորատոր գործիքակազմի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքի ձեռքբերումը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	Նոր լաբորատոր գործիքակազմով ապահովված կենտրոն	01.09.2023թ.	69 100 000
		Ընդամենը՝				**69 100 000**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011041127
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
Կ.Տ (ստորագրություն)

Կազմակերպություն
«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Բագրատունի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001694
ՀՎՀՀ 00091789
Տնօրեն
Ե. Աբրահամյան
(ստորագրություն) Կ.S

Հավելված 2.
2022 թ. դեկտեմբերի 23-ին
կնքված N 2043 -Ն/8 պայմանագրի

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ ձեռքբերվող լաբորատոր գործիքակազմի նախահաշիվ

N/N	*Անվանում*	*Տեխնիկական բնութագիր*	*Չափման միավոր*	*Քանակ*	*Միավորի արժեք /ՀՀ դրամ/*	*Ընդամենը /ՀՀ դրամ/*
1	Սպեկտրոմետր (The FTIR spectrometer ALPHA II. Bruker)	Սարքը տեղեկություն է տալիս հիմնաշերտը և գունաշերտը կապակցող նյութի, ինչպես նաև օրգանական բնույթի լաքերի և պիգմենտների վերաբերյալ: Էտալոնային բազայում առկա տվյալների համեմատությունը նմուշառված յուղային կապակցող նյութի ֆիզիկաքիմիական բնութագրի հետ թույլ կտա բավականին ստույգ թվագրել փորձաքննվող աշխատանքը:	հատ	1	23 000 000	23 000 000

2	Շարժական ֆլուորեսցենտ-ռենտգենային սարք (The Portable XRF Analyzer, S1 TITAN)	Սարքը հնարավորություն է տալիս արագ և առանց նախնական նմուշառման անցկացնել կտավի, ինչպես նաև մետաղական համաձուլվածքների (այդ թվում՝ ոսկերչական իրերի) բաղադրության վերլուծություն: Սարքի էկրանին արտացոլվում է օգտագործված ներկաշերտերի քիմիական բաղադրությունը, ինչը հնարավոր է դարձնում բնութագրել օգտագործված սպիտականերկերը և հիմնաշերտը, ինչպես նաև կարծիք ձևավորել կիրառված ոչ օրգանական այս կամ այն պիգմենտների վերաբերյալ: Արդյունքում կարելի է պարզել բոլոր քիմիական մասնիկների զանգվածային տոկոսային հարաբերակցությունը:	հատ	1	21 000 000	21 000 000
3	Ինֆրակարմիր ռենտգենային օպտիկական սարք (T540: (Science) 468x348 Thermal Camera with 14° Lens, FLIR)	Սարքը հնարավորություն է տալիս լուսանկարել առարկան ԻԿ (ինֆրակարմիր) ճառագայթմամբ, ինչի շնորհիվ ի հայտ է գալիս հեղինակային՝ առաջնային (նախապատրաստական) գծանկարը:	հատ	1	13 800 000	13 800 000

4	Տրինոկուլյար միկրոսկոպ (ZEISS STEMI 2000-C Trinocular Stereozoom Microscope)	Սարքը հնարավորություն է տալիս առավել ամբողջական տվյալներ ստանալ գեղանկարչական մակերևույթի մասին: Կախված խոշորացման չափից՝ բինոկուլյար միկրոսկոպի միջոցով հետազոտողին հնարավորություն է ընձեռվում ստանալ հեղինակային ներկաշերտի՝ վերնաշերտային և հիմնաշերտային սահմանագծերի, վերականգնողական միջամտությունների և այլնի մասին:	հատ	1	3 400 000	3 400 000
5	Բևեռացնող միկրոսկոպ (NIKON SMZ1000 STEREOZOOM MICROSCOPE)	Սարքը հնարավորություն է ընձեռում նմուշառված ներկաշերտի օրինակում հայտնաբերել անօրգանական ծագման պիգմենտները, ճշգրտել սպիտականերկի բաղադրությունը, իսկ որոշ դեպքերում նաև ճշգրտել օրգանական պիգմենտների առկայությունը: Հատուկ լուսավորությամբ միկրոսկոպիկ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել պիգմենտի բյուրեղային կամ այլ տիպի կառուցվածքը և էտալոնային համեմատության միջոցով կատարել թվագրում:	հատ	1	2 800 000	2 800 000

6	Ռենտգենոգրաֆ (Oxford Instruments Handheld XRF-X_MET7500 Series Analysers OXFORD INSTRUMENTS,	Ռենտգեն հետազոտություն իրականացնող սարք է, որը հնարավորություն է ընձեռում ստացված նմուշների և առկա բազային շտեմարանի համեմատական վերլուծության միջոցով դուրս բերել հեղինակային վրձնահարվածների, տարածության ու ծավալների կառուցման հեղինակային յուրահատկությունների թվային պատկերները:	հատ	1	5 100 000	5 100 000
ԸՆԴԱՄԵՆԸ՝						**69 100 000**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011041127
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն
«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Բագրատունի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001694
ՀՎՀՀ 00091789

Տնօրեն

Ե. Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ